

ԹԻԻ 29

ԷՏՎԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒԶԱՆ ԵՐԵՒԱՆ

Ա. ՕՀԱՆՈՒԿԵԱՆ



Նկարազարդեց
Մ. ՄԻՆԱՍԵԱՆ

ՈՒԹԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

"ԷՋՎԱՆ" ՏՊԱՐԱՆ
ՊԷՅՐՈՒԹ
1·9·5·7



ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ

(ՀԱՏՈՒԱԾ)

Գրեց՝ Յ. ՕՇԱԿԱՆ

Անդրանիկ Ծառուկեան ոչ Սիամանթօ մըն է, ոչ Վարուժան մը եւ ոչ ալ Պ. Դուրեան մը: Ու պէտք ալ չունի առոնք կամ առոնց չուքը ըլլալու: Անիկա, նորերէն տղան է որուն ներսը դրական նանրանքը դրեթէ չէ դործած:

Անիկա դրած է իր դիրքը, առանց կնքահայրութեան, առանց մունետիկի, առանց քաջալերի: Ուղիղ, արագ, մինակ, յանդուգն: Այսպէս կ'ըլլա՞ն արդեօք անոնք որոնք դրական համբաւ մը կը հալածեն տարիներով, դարերու քառորդներով ու կը դրեն միայն ու միայն այդ համբաւին, աղմուկին ի հաշիւ...:

Ձեմ երկարեր:

Անդրանիկ Ծառուկեան Սփիւռքի տղայ մըն է

որ

բախտաւոր օր մը առաւ այդ Սփիւռքէն չերտ մը բան — դուք դրէք Վարուժանի ափ մը կարմիր հողը — նետեց զայն իր սրտի

քուրային ու անկէ հանելց արիւնոտ, կենսագործեալ իր վկայութիւնը, Թուղթ առ Եբեւացը, որ ահա իր այս ճակատագրովը, այսինքն սիրտէ եկած ըլլալու ճակատագրովը կը զատուի դրականէն — այսինքն ուղեղէն եկած — դիւաններէն մեր Սփիւռքին: Ասիկա արժանի՞ք: Չեմ կարծեր: Բայց մօտ է ժամանակը երբ այդ սիրտէ փրթած ըլլալու ճակատագիրը պիտի փոխակերպէն դատապարտութեան կնիքի մը: Ատոր համար է ահա իմ վկայութիւնը:

Գրական արժանիքը չեմ ենթարկեր նուազման կամ արհամարհանքի (տեսանք ատիկա Սփիւռքին իմաստուններուն բերնովն ալ դիւցազներգուա՞ծ): Կ'ըսեմ միայն որ երբեմն անիկա անհրաժեշտ չէ, գործի մը բախտը վճռելու համար: Չեզի տուած եմ անունները գործերու, որոնք այդ արժանիքէն հիմնովին զերծ, անժառանգ ծնան բայց կազմեցին ամէնէն բարձր թիրաժները տպագրութեան պատմութեան: Ցետոյ խորհեցէք Պ. Դուրեանին ու չրջանի բանաստեղծական ախորժանքներուն: 1871ին, եթէ մեր օրերու զրահանքով դրական քննադատ մը ունենար դոյութիւն, ասպահովաբար այդ երանելի մարդը պիտի տարածուէր հանդամանօրէն վերլուծելու Դուրեանի տաղարանին ինքնատպութիւնը, խորութիւնը, իրաւութիւնը, զեղեցկութիւնը ու պիտի մոռնար խօսիլ լեզուէն, ոճէն, տաղաչափական անոր նուաղումներէն: Ու պիտի չըլլար խորհած այդ տաղարանի հեղինակին դրական արժէքներուն:

Ասկէ՝ դէպի լուրջ, պատասխանատուութեան հրաւիրող միւս յայտարարութիւնը.

— Անդրանիկ Ծառուկեանը արտօնուա՞ծ ենք ողջունել իբր իր սերունդին անդրանիկ ու իրաւ բանաստեղծը, ինչպէս եղան այդ իրաւութեամբ ողջունուած Պ. Դուրեանը, Դանիէլ Վարուժանը, Մ. Մեծարենցը, Մատթէոս Զարիֆեանը: Մեծ սա անուններուն արժանիքները մոռցէք պահ մը, կենալու համար մտածկոտ, անոնց վարկերուն յանկարծակի հաստատումին: Ծառուկեանի հատորիկը դիմաւորուեցաւ քաղաքական իմաստութեան ասպետներու կողմէ, որոշ վերապահութեամբ: Ու չհանդիպեցայ արագ յիշատակութիւններէ դուրս իրաւ կշռի մը, այդ հատորիկին տեղը ճշդող: Կարդացին, սիրեցին, նոյնիսկ յուզուեցան,

բայց չունեցան չեմ ըսեր անկեղծութիւն, պարկեշտութիւն, այլ արիութիւն այդ զգացումները բարձրացնելու դատումի: Իր սեռունդէն ուրիշ մը, արձակին վրայ արթնցուց հաւասար կիրք, հետաքրքրութիւն, խանդավառութիւն: Մարդիկ մինչեւ այսօր կը զրաղին Նահանջը առանց երգիին ծանր վաստովը: Իր լոյս տեսած օրերուն ես չվարանեցայ այդ դիրքին մէջ տեսնելու իր սեռունդին անդրանիկ կատարեալ վէպը, հակառակ անոր որ անոր հեղինակը հոդևկան դնչուութեան ախտը չնորհներու սպառում մը կը վառասիրէր իր երէցները անարգելու մէջ սրամտութիւնն ու ոճը դրականութեան բարձրացնելով, ու դրելը ուրիշները ծաղրելու վտքրոզութեան:

Կը դնեմ հարցականը, կրկին սա տողերուն վրայ:

Անոնք որ ժամանակին իմաստը պիտի ուզէին արժեւորել ու իրենց զգացումները ներքին զսպումի մը ենթարկել, կրնան սպասել: Ուրիշները, որոնք ինքնեկ ապրումներու վաստերը չեն ենթարկեր ներքին կասկածի, կրնան աճապարել: Թուղք առ երեւանը կարդացի դրական վաւերագիր մը իրրեւ: Իմ վկայութիւնը ծնունդ է ուրեմն դրական դգայարանքի մը:

Ու ըստ այդ վկայութեան

— Թուղք առ երեւանը իր սերունդին անդրանիկ յաջողուածքն է քնարական կալուածին վրայ: Համահաւասար նահանջը առանց երգիին վիպականին վրայ: Ասիկա անշուշտ չի նշանակեր ուրանալ Սփիւռքին միւս տաղարանները, ինչպէս Նահանջը առանց երգին չէր փոչիացներ արեւմտահայ վէպը: Մեր մէջն է որ յաջողութիւնները կը վոխակերպուին մեծութեան, ամբարտաւանութեան վաստերու, երբ այնքան բնական պիտի ըլլար զանոնք արժեւորել իրենք իրենց մէջ:

Գիտեմ որ հաւարը պիտի վրթի սա տողերուն եռեւէն: Կը կենամ խաղաղ, քաղցր սպասումով, մինչեւ որ մեղմանայ յուզումը ու Սփիւռքի քերթողները դառնան իրենց խորագոյն անկեղծութեան ձայներուն: Կը սպասեմ որ ինծի տրուին պատեհութիւններ ուրիշ անուններ ալ սա իրաւութեամբ դիմաւորելու: Ամբարտաւան, կործանող, անոտաղանդ կամ հանճարեղ դատող Օշականը, իր տիտղոսներէն չնեղուելու չափ իմաստուն է եղած, մօտ կէս դար տեւող վորձառութեամբ մը դիրքերու բախտերէն:

Հիմա որ ունիք անոր

— վկայութիւնը

լաւ կ'ընէք, քերթողները, երբեմն ձեզմէ վեր ըլլալով: Ես տուի օրինակը: Այս պարկեշտութիւնը ոչ ոքի պիտի վնասէ: Ու անկէ չահողը պիտի ըլլար միշտ ու միշտ

— Հայ Գրականութիւնը

որուն բոլորանուէր սպասարկուներէն մէկը, իր չունեցած ժամանակը, վտանգի դիմով, չէ վարանած սա էջերուն յատկացընելու:

Սփիւռքը կրնայ մտածել իր ժողովուրդին, նման պիրքերու ճամբով:

(ԵՐՈՒՍԱՂԷՄ, 4—15 Նոյեմբեր, 1945)

Արուեստագէտը նորի երգիչն ու մարգարէն չէ միայն, այլ նաեւ հինի ժառանգորդը. ան միշտ աւանդութեանէն առաջ կը բերէ նորը:


ԹՈՄԱՍ ՄԱՆ

●

ՄԵՆՔ ՉԵՆՔ ՄՈՌԱՑԵԼ

Մա՛յր որդեկորոյս,
Որդի՛ֆ որբացած՝
Ուրուականների՛ց
Այդ սովահալած —
Երկրում մեր աւեր
Այն ո՞վ էր դաւել,
Մենք չե՛նք մոռացել:

Ո՞վ էր վաճառել
Գիշատիչ գայլին
Ժողովո՛ւրդը մեր
Ու գամել ժայռին,
Արնաբամ ու մերկ
Թէ մանուկ, թէ ծեր —
Մենք չե՛նք մոռացել:



Դո՛ւք դաշնակ շներ,
Դուք հայ գեղջուկին
Ստիպել էք չոբել
Եւ իր սիրտն ի վեր
Պարպել մառուզեր —
Այդ չենք մոռացել:

Դո՛ւք էիք արիւն
Ու հուր տարածել,
Որ արիւնաքրտու
Սեւ մոլո՛խը ձեր
Իր մեծ աւարից
Ձեզ պատառ գցեր —
Մեզ չե՛ք մոռացել:

Որ կը դառնայիք
Ֆաշիզմի ռազմի
Արիւնածարաւ
Շներն աճապնիւ,
Արնոտ բորեաու
Թաթը կը լիզէք,
Մեզ չե՛ք մոռացել:

Մեզ չե՛ք մոռացել,
Որ պիտի չնչեք
Երկրից առյաւէտ՝
Սեւ Ֆաշիզմի հետ՝
Նաեւ հե՛տք իսկ ձեր —
Ո՛չ,
Ձեզ մոռացել:

ԳԷՈՐԳ ԱԲՈՎ

(Կարմիր Մարտիկի Դրադարան, թիւ 7.
ՀԱՅՊԵՏՀՐԱՏ, Երեւան, 1944)



Այս ուշ գիշերին,
Աշնան տխրակոծ հողմերի միջով
Ու բարակ մաղուող անձրեւների տակ,
Գնում է ահա,
Մի քայլամոլոր ու հիւանդ տղայ.
Անցնում է խոնաւ ու թաց մայթերից
Գլխահակ, տրտում,
Եւ նրա սրտի մռայլ խորքերում
Խփող որպէս մուրճ՝ ծանր մի թախիծ...

Գնում է խոնաւ ու ցուրտ մայթերով
Անընկեր, մենակ,

Ձեռները անփույթ գրպանների մէջ,
Աչես իր յոգնած ուսերի վրայ
Անտեսանելի մի ինչ որ կապար.
Մի չար աստուծոյ ինչ որ մութ անէծք,
Ոխակալ բախտի
Ճակատագրային հսկայ մի բռունցք...

Նրա աչքերի փոթորկած ծովում,
Որպէս թեւաբախ ու մեռնող թռչուն՝
Մի անհաս կարօտ.—
Հեռաւոր գարնան նետուած պաղատանք,
Կապոյտ լեռների ու ջերմ արեւի
Որպէս յաճախանք՝
Անհա՛ս մի կարօտ հայրենի երկրի:

Երազում է նա իր երկրի մասին
Ինչպէս կարօտած մայրը իր զաւկին,
Ինչպէս պապակած հողը անձրեւին,
Ինչպէս սրսփող հիւանդն արեւին,
Ինչպէս ոգեվար կռունկը կեանքին՝
Երազում է նա իր երկրի մասին:


Օ՛ հիմա այնտեղ չէն երգիքները կան,
Ու զուարթաձայն երգեր ու ծիծաղ,
Հողից դուրս պայթած սերմերի նման
Նոր սերունդների կեանքը կայ չքնաղ.
Ու մանուկներ կան հազար ու հազար,
Երազ աչքերով անթիւ մանուկներ՝
Ապագայի դէմ ժպտուն ու պայծառ:



Հեռաւոր երկրի կարօտը սրտին
Ու լուսապայծառ երազն աչքերում,
Աչնան դալկացող սոուերների հետ
Ու բարակ մաղուող անձրեւների տակ,
Ինքն էլ երերուն, մի տարտամ սոուեր՝
Ո՞վ է նա — մոլո՛ր ու անտէր տղայ,
Ի՞նչ է նա — սուզուած նաւի մի խլեակ,
Ո՞ւր է նա — օտար ու խորթ մի աշխարհ,
Ի՞նչ ունի — ոչ հայր, ոչ տուն, ոչ զաւակ,
Ոչ մի կտոր հող անծայր աշխարհից
Ու ոչ մի երդիք այս երկնքի տակ.—
Անվերջ մաքառող պայքարում հացի,
Ջունի նա ոչինչ՝ վշտերից բացի...

Այսպէս հողմավար ափունքից ափունք
Ֆչուող բիւրաւոր խլեակներից մին՝
Այդ ես եմ ահա,
Որ գնում եմ թաց ու մութ մայթերով,
Ես առամներիս տակ սիրտս սեղմած՝
Մտածում եմ քո մութ երդի մասին,
Օ՛ Գէորգ Աբով...

Հայրենի երկրից դու ինձ ես յիշել,
Ինձ գիր ես գրել բառերով հատու,
Ու բառերի մէջ դրել ես կրակ,
Ու կրակի հետ թոյն ու մոլեխինդ՝
Ես ասում ես ինձ.
— Քեզ չեմ մոռացել.
Դու ուզում էիր սարքել պատարագ
Ես զոհասեղան վասն հայրենեաց,
Դու ուզում էիր



Նուիրել նրան արիւնդ կարմիր,
Դէհ, եղիր պատրա՛ստ.
Հայրենիքն էլ քեզ տալիս է ահա
Թոյն ու մոլեխինդ.
Քեզ չի մոռացել, նա քեզ չի մոռնայ,
Ու կը հալածի քեզ անհաչտ ոխով՝
Մինչեւ մեր պայծառ արեւի ներքոյ
Անհետ չքանայ յիշատակը քո...

Ես չեմ ատում քեզ, անէծք չեմ տալիս,
Իր խենդ արիւնի կարկաչուն երգով
Հայրենակարօտ ու խոցուած հոգիս
Զունի քեզ հանդէպ, օ՛ Գէորգ Աբով,
Ոչ քէն, ոչ բողոք,
Այլ բուռթ մի կսկիծ, անանուն մի ցաւ,
Եւ որպէս կարիճ խայթող մի մորմոք...

Եւ ինքս ինձ հետ դեռ մխոք եմ անում,
Թէ ո՞նց է եղել, — եղե՞լ է արդեօք —
Որ հրդեհներում կիզուած Փիտային,
Զարիքի հանդէպ այնչափ անողոք,
Տկարների դէմ անչափ կաթոգին
Մեր Ջա՛ն Փիտային,
Իր եղբայրների հանդէպ հարազատ
Լինի այնպէս չար եւ անմարդկային,
Լինի այնպէս վա՛տ...

Այդ ե՞րբ է եղել
Որ հայ գեղջուկին ստիպել են չոքել
Եւ իր սիրտն ի վեր
Պարպել մաուզեր:
Ե՞րբ է պատահել արարքն այդ դժխեմ,
Հայը հայ մարդին ե՞րբ է կոտորել,
Հայն հայի արեան ե՞րբ է ծարաւել.

Զառանցա՞նք է սա թէ մի սեւ կատակ,
Եւ կամ Պատմութեան յատակից պղտոր,
Գորշ ու լպրծուն դիրքը խառնելով
Դուրս հանուած մթին լեգէնտի կտոր...

Հայը հայ մարդին ե՞րբ է կոտորել
Օ՛ Գէորգ Աբով.—

Թէ մութ օրերին,
Փոթորկոտ ու սեւ, այն սեւ օրերին,
Բաբելական խուլ խառնակոյտի մէջ
Մեկնել է անմիտ, մի յիմար գնդակ
Եւ անմտօրէն խփել մի հայի,—
Թէ մի գազազած, անօթի հայդուկ
Դարձել է քաղցից խելառ աւազակ
Եւ անասնական սուր մոլուցքի մէջ
Հրացան պարպել հարազատի դէմ,
Կողոպտել նրա պատառը վերջին,
Յետոյ կուլ գացել անողոք սուվին
Ինքն էլ իր հերթին,—
Թէ փրփրակուտակ ալիքների մէջ
Յեղափոխութեան կատաղած ծովի
Ու պայքարի մէջ կեանքի ու մահի
Մի եղբայրասպան կռիւ է եղել
Յաւէտ ողբալի,—
Ինչո՞ւ որոնել, որպէս նեխած լէշ,
Տասնամեակների ներքեւ պատանքուած
Կոխն այդ տխուր ե՛ւ անմիտ ե՛ւ դէշ,
Ու նետել որպէս մարտի հրաւէր,
Օտարութեան մէջ, հայրենի երկրի
Կարօտով մեռնող հարազատներին...



Եղել է հնում թէ բիւրտ ու հարբած
Ինչ որ մաուզէրիստ,
Զի՞ եղել մէթէ եւ մի խեւ Աւիս,
Որ մեծ Լէնինի պատգամին անտես՝
Երեւանեան մութ բանտի նկուղում
Կացինահարման սարքել է հանդէս...
Դո՞ւրս ժայթքել նորից հին ոխը ժահրոտ,
Եւ որպէս արջասպ
Մխեանոց երեսին արձակել ամօ՞թ...
Յիշե՞լ ոնց մեռաւ մարտիկն Համազասպ,
Յիշե՞լ, յիշե՞լ դեռ... ինչո՛ւ, երբ արդէն
Ծանր պատմութեան դլանը հարթիչ
Թաղել է անդարձ ամէն ոխ ու քէն...

Եւ ինչո՞ւ քամուն չյանձնել նորից
Ինչ բերել էր մեզ սեւաբախտ քամին,
Ու եղբայրների միջեւ արտակից
Ցանել պայքարի որոմներ մթին.
Ինչո՞ւ չպոկել մեր կանաչ արտից
Բոյսերն այդ զազիր որպէս մոլեխոտ
Եւ անգէտ մնալ, թէ կռիւն այդ հին
Մեր դաժան բախտի խաղն էր արիւնոտ,
Եւ ճակատագրի քրքիչը վերջին,
Նետուած ուժաքամ մեր ժողովուրդի
Անծայր սուգերից դեռ թաց աչքերին...

Գուցէ եւ մի խենդ եւ դինով աստուած
Կամեցել է դեռ, որ լինի դրուած՝
Թէ մի ողջ երկիր յանձնել են սրին,
Մի ողջ ժողովուրդ ղրկել անապատ,
Զարդել անխնայ Ե՛ւ մանուկ Ե՛ւ ծեր,

Լինել անպատիժ կոյս թէ նորահարս,
Պղծել աներկիւղ եւ խաչ եւ խորան,
Ու կէսը նրա — Միլիո՛ն մի կեանք —
Նետել են մահուան,
Որ կէսը ապա ծաղկի ու չէննայ,
Բայց իր նորաստեղծ երկիրը թրջի
Էլի՛ մի անգամ հայի արիւնով
Եւ հայի ճեռքով...





Կարող են մարդիկ խախտել լեռներին
Ու բազկի ուժով սանձել գետերին.—
Բայց ո՞վ է կարող
Ժամանակների վճիռը եղծել,
Եւ դիւցազնուԹեան կապոյտ երկնքում
Շողացող աստղին վարպետը քաշել...

Դաշնակ չների՛ն...
Բայց ո՞վ են նրանք, չներն այն բոլոր,
Որոնց սրբազան յիշատակն ի վեր,
Մի քերԹող Աբով — բառերի որսորդ —

Եկել իր թղթէ կապարճն է պարպել...
Շնե՞ր են նրանք, մարտիկներն այն սուրբ,
Հողի կարօտով հող դարձած մարդիկ,
Որ սիրտը իրենց որպէս պայթող ռումբ,
Եւ կեանքը իրենց որպէս խօլ մրրիկ
Զարկել են Հայոց դաժան լեռներին,
Եւ թշնամու դէմ լեռնացած քէնով
Քայլել են կեանքից ու հասել մահին...

Շնե՞ր են նրանք, հերոսներն այն վեհ,
Մեր ազատութեան վաղ այգաբացին
Հէքեաթից յառնող վիշապների պէս
Ու հէքեաթ դարձած ոգիներն ահեղ.
Նրանք՝ որ խաւար ժամանակներում
Շրջել են վառուող խարոյկների տեղ,
Որպէսզի մթին հայ խրճիթներում
Դարերով մարած յոյսը պլպլայ,
Եւ արդարութեան ծիրանի գօտին
Նորից կամարուի հայ երկրի վրայ,
Որպէսզի խրուի դութանը անչեղ
Մեր սեւ հողերի չարչարուած կողին,
Եւ ակօսներում, տաք քրտինքի տեղ
Մաճկալի ճակտից չթորայ արիւն,
Որպէսզի արդար հացի սեղանին
Աղօթքի փոխան չլինի անէծք,
Եւ արարչութեան լուսինը դեղին
Մեր մանուկների հեւքոտ երազում
Երկնքից կախուած չթուայ լայն վէրք...

Շնե՞ր են նրանք... Եւ չո՞ւն էր արդեօք
Եարի փոխարէն ցուրտ զէնքը գրկած
Խրոխտ Ֆիտային — մարմնացած բողոք,
Ու համակ կակիծ, ցասում ու վրէժ,

Որ անհաւասար մարտի էր ելել
Ընդդէմ արիւնռուչա Սուլթանի խենէշ,
Եւ ընդդէմ Ցարի, ընդդէմ Խաների
Ու բոլո՛ր, բոլո՛ր բռնակալների...


Շնե՞ր են նրանք... Եւ չո՞ւն էր միթէ
Մղձաւանջներում մղձաւանջ դարձած
Սասնոյ վիհերի ոգին երկաթէ...
Եւ չո՞ւն էր միթէ
Հրայրը թախծոտ—գաղափարի՛ սիւն,
Եւ չո՞ւն էր արդեօք որպէս աչտանակ
Ռումբից հրկիզուած հէգ Բաբկէն Սիւնին.
Թէ՝ ազատութեան բազինի առաջ
Ընկած նահատակ...

Օ՛, չո՞ւն էր, չո՞ւն էր
Գէորգը առիւծ, Սերոբը պարթեւ,
Մակար ծերունին՝ չնչող մագաղա՛թ,
Օ՛ չո՞ւն էր Մուրատն իր ձիու վերեւ,
Ռոստոմը խոժոռ՝ կաղնի՛ հաստատմատ,
Եւ Քրիստափորն արդա՛ր ուժանակ,
Շո՞ւն էր Զաւարեանն՝ անբի՛ծ ինչպէս լոյս,
Թէ մեր աչխարհում մարդացած Յիսուս...

Ու լեգենտական թափօրը հսկայ
Համեստ, անանուն մեր հայդուկների,
Արեան ու վշտի ծովերից անցած,
Լեռների լանջին եւ մութ ձորերում
Անթաղ մնացած մեռելներն ամէն,
Կախաղանների մռայլ կատարին
Եւ արհաւիրքի խուլ զնտաններում

Զոհերն անհամար,
Ու նահատակներն այն լուսապսակ
Հայոց պատմութեան անդունդներն ի վար,
Բոլորը նրանց չների վոհմակ...

Ու դեռ Դպրութեան այգեստաններից
Փոխան երազի՝ դժո՛խք չալակած,
Փոխան տաւիղի՝ չեփորով պղինձ
Աւի՛ւն, արհաւի՛րք, կոտորա՛ծ երգող
Քերթողները վէս,—
Փոթորկամռունչ, խօլ Սիամանթօն,
Եւ քաղցրաթախիծ Վարուժանը հեզ,
Վաստակը նրանց չների թողո՞ն...
Մարգարէաչունչ երգերը նրանց
Շների կտղկա՞նճ...



Օ՛ հիմա, հիմա
կարող է նրանց ոգին անհանգիստ
Յանկարծ ծառանալ երկնքի դիմաց
Որպէս վիրաւոր գամբռռ մի հսկայ,
Բանալ աստղերին իր սիրտը մռայլ,
Ու ցաւից կանգնել զոյգ ոտի վրայ
Եւ անվերջ ոռնալ...


Օ՛ հիմա, հիմա,
Եղեռնի կարմիր անապատներից

Կարող է անթարթ ու չոր մի կմախք
Շարժուել դէպի վեր, աստղերի ճամբով,
Հասնել երկնքին,
Եւ ստեղների վրայ Յարդգողի
Մի ահեղմասա համերգ փոթորկել...

Օ՛ հիմա, հիմա,
Կարող է երկրի սիրտը պատառուել,
Լինել տեղաշարժ,
Եւ ընդերքներից Հայոց Աչխարհի,
Որպէս յայտնութեան քամնող միրաժ,
Դուրս խուժել յանկարծ
Դաչնակ չների մի անհուն բանակ...

Օ՛ հիմա, հիմա,
Կարող է նոյնիսկ,
Որ դաչունահար ու մերկ մի մարմին
Անսանձ հոդմերի չեփորը գողնայ,
Եւ քար մարդկութեան քարեղէն խղճին,
Անէծքի չունչով բիրտ ու անխնայ,
Մի վերջին անգամ էլի՛ որոտայ
Խարուած իր հոգու կսկիծը խորին...

Կարող են մարդիկ խախտել լեռներին,
Բայց ո՞վ է կարող
Վճիռը եղծել ժամանակների,
Եւ դիւցազնութեան կապոյտ երկնքում
Շողացող աստղին վարագոյր քաշել...



Աբեան ու ցաւի ծովերից անցած
Մեր հազարամեայ հին նաւը խարխուլ
Մի վերջին անգամ առագաստ պարզած
Եկել է ահա այս ափերին փուլ.
Քանի՛ մրրիկներ ծեծել են նրա
Կայմերը հաստատ, կամուրջներն ամուր,
Եւ որպէս փետուր
Նետել մոլեգնած կոհակների վրայ,
Ջարկել խուլթերին,
Ու զահանդական, խոր անդունդների
Խաւար երախին...

Եկել են մեզ դէմ
Վոհմակներն անթիւ մութ խուժանների,
Եկել հիւսիսից, եկել հարաւից,
Տափաստաններից եկել են ծարաւ,
Ու մեր մաքրափայլ, պայծառ ջրերին
Խառնել են նեխանք, արիւն ու չարաւ,
Արտերին իջել՝ հանց անկուչտ մարախ,
Գիւղերին նստել որպէս պղծութիւն,
Ու չի մնացել եւ ոչ մի օջախ,
Ուր մեր հարսների ճակատին մաքուր
Շնագայլերի գարշահոտ դնչից
Նարօտի վրայ չլինէր սեւ մուր...


Երկիրը մեր չէն դարձել էր դամբան,
Ու դամբանի մէջ ժողովուրդը մեր
Եղել անկշտում սրերի յեսան.
Ապրում էր ահով, կէս–մեռել կէս–ողջ
Վեց սարկուեթեան անհատնում դարեր.
Կեանքը նրա մէջ լոկ կայծ էր դողդոջ
Եւ նա աչխարհում թափառող սուուեր,
Տառապանքների ներքեւ անհաչիւ
Կորցըրած ընդմիչտ ե՛ւ ինչք ե՛ւ պատիւ...

Եւ դամբանների անծայր խաւարից,
Ցուրտ մոխիրների պատանքը թօթուած,
Զարթնել է յանկարծ մի սիրտ կենսալից.
Տրոփել է նա կչռոյթով առողջ,
Եւ նրա արեան ցնցող զարկերից
Շնչել է մեռեալ երկիրը ամբողջ.
Թմրած հոգիներն առել են խոյանք,

Սարուկը խոնարհ դարձել է մարտիկ,
Պայքարը ազնիւ նկատել պարծանք
Եւ աղաղակել — Մահ կամ Հայրենիք...

Մի սիրտ է խփել մոխիրների տակ,
Հողմերի դիմաց բացուել մի դրօշ,
Թափուել է արիւն, սուլել է գնդակ,
Լսուել սուրերի կայծակնագոռ շաչ.
Ոսոխը վատթար ջարդել է անվերջ,
Մարտիկներն անվախ քայլել են առաջ,
Կռուել լեռներում ու վիհերի մէջ.
Նորեր են եկել ընկածների տեղ,
Երկիրն է դարձել գալարուող բռունցք,
Արիւնը դարձել գայրագին հեղեղ,
Հովիտները խոր լճացած արցունք.
Դժո՛խքն է փլել մեր երկրի վրայ
Ու հողն է պայթել որպէս չէկ կաթսայ...

Հոսել են ապա հեղեղներ տղմուտ,
Եւ մութ ամպերի արանքից դաժան
Բացել երկնքի կտոր մի կապոյտ.
Յոյսեր են ծաղկել, եւ չունչը գարնան
Խոստացել երկրին մի բեղուն ամառ.
Արցունքն է սրբել ժողովուրդն հայոց
Եւ լծուած հերկին ագնիւ ու արդար,
Յառել է աչքերն օրերին գալոց.
Եւ հաւատացել՝ թէ իր վէրքերին
Հպում են ահա մատներ բարեգութ,
Թէ եկել, հասել է Սամարացին,



Կը լինի չուտով ոօն ու այգեկութ,
Հնձաններէն մէջ կը խայտայ գինին,
Ընդմիշտ կը չքուի սուռերը մահուան
Ու լեռներէն վրայ եւ մեր դաշտերէ՝
Նորից կը ժպտայ պայծառ ապագան...

Յոյսեր են ծաղկել... կտոր մի կապոյտ...
Հօֆ եւ վէստէնէնկ... Բարեհորոդում...
կտոր մի կապոյտ.—
Ուղեղներէն վրայ, սրտերէ վրայ՝
Դաշնագիրներէն փոչեթաթաւ կոյտ.
Հոգիներէն մէջ՝ յոյզերէ վերթակ.
Ու երակներում՝ ցնծութեան կրակ.—
Կը լինի չուտով հարսնիք ու ծիծաղ,
Անապատը չոր կը լինի պարտէզ,
Ողբը հնօրեայ՝ սիրոյ անուշ տաղ...
Կտոր մի կապոյտ... Յոյսը՝ կը լինի
Ձմռայ մէջ բացուած վառման վարդենի...
Կտոր մի կապոյտ... Եւ կապոյտի վրայ՝
Ինչպէս... ինչքան չուտ...
ա՛հ, ինչպէ՛ս,
ինչպէ՛ս,
Յեղակարծ փայլա՛կը մեծ եղեռնի...

. . . . . .

Յիշո՞ւմ ես, Աբով.— կռիւ էր նորից,
Լիզում էր աշխարհն հրդեհը քանդիչ,
Տուել էր կեանքին մահը մի նոր կիզ
Ու սիրտը մարդուն դարձըրել արճիճ:
Նորից բանակներ բանակների դէմ,
Նորից բռնութեան խելագար արշաւ,
Իսկ մեր հողերում, ոսոխը խարդախ
Նիւթել էր ծածուկ ահաւոր մի դաւ,
Բացել մեր առաջ անհուն մի դագաղ...


Ու կարաւաննե՛ր՝ անվերջ ու անծայր,
Անգաստաններում՝ արհաւիրք ու սուր,
Քաղաքները չէն դեռևին հաւասար
Ու ճամբաներին՝ դանկերի բլուր...
Ոռնում էր խուժանն անկուշտ ու վայրագ
Եւ իր սեւ հոգուն ու եղեռնի վրայ,
Որպէս անթափանց խաւարի վերմակ՝
Փռուել էր նեխած խիղճը մարդկութեան...

Յիշո՞ւմ ես, Աբով.— եղել է մի օր,
Անցած ու գալիք օրերից բոլոր
Անջատուած մի օ՛ր.
Ապրիլ է եղել, գաշտերում ծաղիկ,
Եւ մի հեռու տեղ, մի գետի ափին,
Եղել է արեան կարմիր բաղանիք...
Եղել է մի օ՛ր,
Եւ արաբական տաք աւազներում՝
Եղել Ռաս–իւլ–Այն, եղել է Դէր–Զօր.
Յիշում ես, Աբով.—
Եղել է Դէր–Զօ՛ր...

Յիշո՞ւմ ես Աբով.—
Թէ եղաւ մի սեւ ու վատութեան օր,
Ժողովուրդը մեր մորթուող ոչխար,
Ապա եւ նորից ինձ հետ միասին,
Ճակատները վա՛ր՝
Համբոյր տանք բոլոր, բոլո՛ր չներին,
Օ՛ Գէորգ Աբով,
Որ մեր աղաւոուած ու անսուրբ ճակտից
Անմար վրէժի սրբազան հրով
Գարշ ստրկութեան ամօթն այրեցին...
Եւ վա՛ռք չներին.

Ներանց՝ որ մահով յաղթեցին մահուան
Եւ մահից առաջ թշնամու ճակտին
Որպէս պղծութեան անմոռաց խարան,
Աչեա՛մբ դրեցին՝
Թէ մահն է միշտ մէկ եւ ամենայն տեղ,
Թէ մարդը կեանքում կը մեռնի մի հեղ,
Թէ հազար երնէկ ու բի՛ւր երանի
Նրա՛ն՝ որ ազգի սիրոյն կը զոհուի...

Ու նորի՛ց պատիւ եւ փառք չներին՝
Վասպուրականից մինչեւ Մուսա Լեռ,
Ու մինչեւ Ուրֆա եւ Գարահիսար,
Զոք-Մարզբանից մինչեւ Տաւրոսներ,
Փա՛ռք մեր երէկի, փա՛ռք մեր ներկայի
Ու դեռ գալիքի բոլո՛ր չներին...





Ցիշո՞ւմ ես Աբով.— Նահանջ էր այլ տեղ
Ու լեղապատառ քայքայման խուճապ.
Եւ որպէս խրտնած ու գինով նախիր՝
Ռուսաց զօրքերի փախուստն հապշտապ:
Նետել էր Լէնինն իր պատգամը.— Տո՛ւն,
Ողջո՛յն տառապող երկրին ու մարդուն,
Ողջոյն ոսոխի՛ն, ողջոյն պարտեալի՛ն,
Ողջո՛յն բոլորին եւ դարձ՝ — դէպի տուն...

Ինչո՞ւմ ես, Սբով.—
Գալիս էր նորից, արևնոտ դնչով
Նոյն հրէշը սեւ ժանիքը սրած,
Որպէսզի անզուսպ թափով մի վերջին՝
Վերջին բեկորին տայ վերջին հարուած...

Եղե՞լ է արդեօք դարերի խորքում
Աւելի մթին, անյոյս ճղնաժամ՝
Երբ օրհասական Հայոց Աչխարհի
Սիրտը վիրաւոր ու արիւնաքամ,
Յաւիտենութեան վիհերից առկախ՝
Դադարեց մի պահ...

. . . . . .

Ինչո՞ւմ ես, Սբով.— Երկինքն էր սառել,
Չկար բարեգութ եւ ո՛չ մի աստուած.
Ու երկիրը մեր՝ կենդանի մեռել,
Ընկել բորենու կլափի դէմ բաց...
Ու ճակատագրի մատեանում անպէտ
Մի ձեռք անողոք
Դրել էր արդէն տխուր վերջակէտ...

Երկինքն էր սառել ու չկար Աստուած...
Բայց ահա՛, ահա՛՝ հէքեաթ թէ հրաշք,
Ծառացաւ մի մարդ,
Հրաշքից վախած ու հրա՛շք մի մարդ.
Կանգնեց նա դաշտում մեր Արարատեան,
Դիակների մէջ եւ ապառաժների,
Եւ հաւատքն արած պողպատեայ վահան,
Եւ սէրն հայրենեաց մի չեփոր ոսկի՝
Սուած, սարսափած մարդկանցից վհատ
Դարբնեց մի բանակ,
Եւ որպէս ոխից չիկացած երկաթ՝
Խփեց ոսոխի ճակատին անարգ...

Յիշո՞ւմ ես, Աբով, թէ ո՞նց ապրեցան
Հայոց աշխարհի զարմերը վերջին,
երբ չկար աստուած, երկինքն էր դաժան.
Յիշո՞ւմ ես կրկին,
Ահեղ Բէլի դէմ ծառացող Հայկին
եւ նրա թոռան.
Թո՞ռն էր նա Հայկի, զա՞րմը Վարդանի,
Դաւի՞թն էր մանուկ,
Հայոց լեռներում յայտնուած ոգի՞...
Յիշո՞ւմ ես նրա ճակատը պայծառ,
Անունն անթառամ —
Մանուկեան Արա՛մ....



Յիշո՞ւմ ես ապա.
Կռիւ էր, երդ էր, խա՛ղ էր մահի հետ,
Թշնամին՝ յոխորտ ճակատների վրայ,
եւ ինչպէս պրկած աղեղի սուր նետ՝
Նրա թիկունքին
Սեպո՛ւհն էր խիզախ եւ իր այրուձին...

Յիշո՞ւմ ես ապա.
Արաքսի ափին վերջալոյս էր վառ
Եւ բլուրների լանջին հեռակայ
Սուինամարտի բոցկլտող անտառ.

Դաշտում՝ վիրաւոր ձիերի խրխինջ,
Հովտում՝ մորթուող թշնամու բառաչ,
Եւ խրամների երախից քանդիչ
Գնդացիրների բոցավառ չառաչ:

Յիշո՞ւմ ես ապա.
Փչրել էր նորից իր ժանգոտ չղթան
Արտաւազդների զայրոյթը հզօր.
Քանդել էր նորից թումբերը համայն
Հայկազուններն ոգին թեւաւոր.
Եւ ատամների կրճատող քէնով,
Որպէս վրնջող ու կատաղած ձի՝
Խածել էր չեղփից մահուան մանգաղի...

Յիշո՞ւմ ես ապա.
Դուրս էին խուժել առասպելներից
Նախահայրերի ոգիները հսկայ
Ու եղել կռուող զօրքին վինակից.—
Հասել էր Սասնոյ Դաւիթը մըրիկ
Ու եղել մարտում
Աննահանջ թափով յաղթող Անդրանի՛կ.
Եկել էր որպէս մի նոր Գայլ–վահան՝
Նիկո՛լը Դուման.
Եկել էր Մուշե՛ղը Մամիկոնեան
Պահած ճերմակ ձին,
Պահած եւ հոգին, պահած եւ անուն,
Ու փոխած միայն, միայն ազգանուն՝
Եւ դարձած Մուշե՛ղ մի Աւետիսեան...
Եւ ինչպէս Մանուէլ վէրքերով առատ,
Մահճից եղկ մահուան թմբիրը թօթուած՝
Թամբել էր իր ձին ու դարձել Մուրատ

Մարտիկ մի ահեղ,
Որպէսզի անփայլ մահով չմեռնի
Եւ թողի պայծառ քաջութեան անուն,
Սրտում մեծագործ իր ժառանգների...

Զյիշե՞լ նրանց — Դաշնակ Շնեերին,
Եւ դիւցազնութեան լոյս ոլորտներում
Շողացող աստղին վարագո՞յր քաշել.
Զյիշե՞լ. ինչո՛ւ.
Թաղել, ուրանալ անցեալ մի չքեղ
Ու դառնալ գնչո՞ւ...

Յիշո՞ւմ ես ապա.
Երաշտ մի հովտից, անանուն դաշտից,
Պողպատ առ պողպատ
Դարերին նետուած կամուրջ մի հսկայ.—
Օ՛ Սարտարապատ...

Յիշո՞ւմ ես ապա.
Սրտերի գրոհ ու կամքի հեղե՛ղ,
Ոգու ուրախա՛ն,
Ու մետաղացած բազուկներ չրդեղ՝
Հրաբուխներից տեղահան անտա՛ռ,
Ու երկնքի դէմ գալարուող թաթա՛ռ—
Յիշո՞ւմ ես ապա՝
Մոռցուած մի գիւղ, մի խուլ կայարան—
Ղարաքիլիսա
Ու Բաշ–Աբարա՛ն...

Քաղաքանջ Հայկից թող մինչեւ Տիգրան,
Ու պերճ Տիգրանից մինչ կարմիր Վարդան,
Ու մինչեւ Գագիկ, ու մինչեւ Թորոս,
Մինչեւ Դաւիթ Բէկ
Եւ մինչեւ, մինչեւ Բաղրամեա՛նն հերոս,
Վե՛ր կենան մի հեղ,
Հողի տակ ապրող մարտիկները մեր
Վե՛ր կենան մի հեղ,
Եւ Արարատից մինչ անհաս երկինք,
Ու երկնքներից դեռ մինչեւ աստղեր,
Ու մինչեւ եթեր,
Ու մինչեւ Աստուա՛ծ,
Ու համբոյր տան ձեզ,
Ու տան ձեզ պատի՛ւ,
Տան վա՛ռք ու պարծանք՝
Հէ՛յ Սարտարապատ
Ղարաքիլիսա՛,
Հէ՛յ Բաշ–Աբարան...



Յիշո՞ւմ ես ապա.
Արիւնից ծորած երիզ մի կարմիր,
Երկնքից պոկուած կտոր մի կապոյտ,
Հասուն հասկերի չող նարնջագոյն,
Եւ վեց դարերի խաւարի վրայ՝
Դրօ՛շ եռագոյն...



Յետոյ Նոյեմբեր, ապա Փետրուար,
Նորից արցունքի ու արեան տարափ,
Մինչեւ մոլեգնած ջրերից վարար,
Երկիրը հիւանդ, խարխափ առ խարխափ
Հասաւ իր կայքին,
Ու պարզեց թեւերն իր ցրտից կարկամ
Բորբ արեգակի դէմ Ժորհրդային...

Ո՞վ չի խաբել մեզ.
Ո՞վ չի մօտեցել մեր խորունկ վէրքին

Որպէս երկնառաք բարի յարալէզ,
Եւ ո՞վ իր անյագ ոսկու ծարաւին
Չի տուել յագուրդ մեր տաք արիւնով,
Ո՞վ չի խաբել մեզ...

Ո՞վ չէր խաբել մեզ.
Ու դեռ կխաբաց կարմիր դրօշին
Թէ հիասթափուած սիրտը մեր վհատ
Առաջին պահին չի տուել հաւատ,—
Թէ հազար անգամ օտարից խաբուած
Ու հազար ձեռքից վէրք առած հազար
Մեր սրտում եղել է մթին կասկած՝
Թէ դրօշների եռեւ կարմրավառ
Գալիս է նորից նոյն Արշը նօթի,
Լ.օբանովների եւ Նիքոլայի
Ստուերը դահիճ,
Որպէսզի նորից, ինչպէս հանրակին
Արճակի քրքիջ՝
Թէ սիրում է մեզ, սիրում հայերին
Եւ սիրում այնքա՛ն, եւ սիրում այնպէ՛ս՝
Որ տալիս է մեզ... դրախտը բաժին,
Իսկ այս աշխարհում դեռ տալիս է մեզ,
Մի մեծ Հայաստան...
քայց առանց հայի,—

Թէ չենք կամեցել մենք լինել անհետ,—
Թէ չենք կամեցել կորչել առյաւէտ,—
Թէ մի հեղ էլ մե՛նք եղել ապերախտ,
Մերժել ենք գնալ երկինք ու դրախտ,
Գտել՝ մեր նախնեաց հողը կենսատու

Քան երանաւէտ դողն Աբրահամու,—
Զե՛նք ուզել ատրուկ լինել օտարին,
Հաւատալ նորից ու խաբուել կրկին,—
Եղբայր է հիմա աշխարհը բոլոր
Ու մե՞նք ենք միայն,
մե՞նք ենք մեղաւոր...

Անցել է արդէն լրիւ քառորդ դար,
Ու երկիրը մեր
կարմիր դրօշին դարձել է ընկեր,
Դարձել է եղբայր:
Նետել է հիւսիս բազուկն իր հուժկու
Մուրճին, մանգաղին,
ճակատը պայծառ, նայուածքը հուժկու
Ու կանգնել կրկին:
Տեսնում ենք ահա խինդով անսահման,
Թէ չի խաբել մեզ դրօշը կարմիր,
Թէ բացուել է դարը երջանկութեան,
Եւ առագաստները մեր հողմալիր,
Նաղաղ ջրերի վրով հեզասահ
Եւ զեփիւռների չնչով այգային,
Նաւը Նայիրեան տանում են վստահ
Վառ գալիքների երազ ափերին:

Դիտում ենք յոյսով ու վառ կարօտով,
Ափին մոռացուած մենք ուղեւորներ՝
Թէ ե՞րբ կը լսուի մեր կանչը խռով,
Կը լսուի անհուն կարօտանքը մեր,
Բարձրագոյն կայմից հսկող նաւաստին
Կը տայ ահազանգ՝
Թէ հորիզոնում մշուշապատանք
Նաւաբեկեալի կայ դողդոջ հրթիռ,
Նեղդամահների զանգուածներ մթին,

Եւ կան երկնքին պարզուած ձեռները,
Թէ հարկ է մեկնի նաւը իր հեռքին
Եւ դառնայ նորից իր բնակորին տէր...

Դարձել ենք հիւսիս,
Ափին թողլքուած մենք ուղեւորները,
Եւ պայծառ աստղին ողջոյն ենք տալիս.
Բայց ողջոյնի հետ, ողջոյնից առաջ,
Արժա՞ն է մեզի, արժա՞ն է մարդուն՝
Նզովք հոլովել իր մեռելներին,
Անցեալն իր նետել որպէս փտած քուրջ,
Արժա՞ն է աստղին վարագոյր քաշել,
Ու վայե՞լ է դեռ, Յարութեան տօնին,
Խաչեցեալների չիրիմը պղծել...

Անցել են նրանք արիւնի ճամբով
Որպէս խաւարում լուծուած ճառագայթ,
Անցել են նրանք, օ՛ Գէորգ Աբով,
Տեսած հազար դաւ, հազար որոգայթ,
Եւ պատմութեան գորչ պաստառի վրայ՝
Դարձել պատմութիւն ու դարձել հէքեաթ...


Անցել են նրանք, Շնները Դաշնակ,
Յաւերժապայծա՛ռ փառքի ճամբեքով,
Անցել են նրանք վոհմակ առ վոհմակ,
Եւ Հայաստանի երկնքից ահա,
Գլուխները զոյգ թաթերի վրայ

Ոգեղինացած Սֆինքսները որպէս,
Անհուն կարօտով ու անհուն սիրով
Տե՛ս դիտում են քեզ, օ՛ Գէորգ Աբով,
Եւ դիտում են մե՛զ...

Կարո՞ղ ես մի պահ
Ազել արմատից բունը մեր ծառի,—
Թէ ունենք հիմա կարմիր Նոյեմբեր՝
Փա՛ռք իր արեւին,
Թէ ունենք զուարթ ու ցնծուն Երկիր՝
Փա՛ռք իր հասակին,
Յիշո՞ւմ ես մի պահ, օ՛ Գէորգ Սրուվ,
Թէ նա կը լինէ՞ր,
Կը լինէ՞ր արեւ, կը լինէ՞ր երկիր,
Կը լինէ՞ր արդեօք կարմիր Նոյեմբեր
Ու դեռ կը լինէ՞ր ժողովուրդը մեր,
Թէ մշուշապատ
Եւ արիւնազանգ անցեալի փոնին՝
Չլինէր չքե՛ղ մի Սարտարապատ...

. . . . . .





Ու պիտի ջնջէ՛ք
Երկրիս առյաւէտ
Սեւ ֆաշիզմի հետ
Նաեւ հե՛տքն իսկ մեր.—
Բայց սեւ ֆաշիզմին յաղթելու համար
Ունէք դուք արդէն
Կուռ բանակների չարքեր անհամար:
Ունէք յաղթութեան
Վառ դրօշ պարզած քաջ զօրավարներ.
Ունէք Բաղրամեան,

Ունէք հանճարե՛ղ ու մե՛ծ Ստալին,
Որ ինչպէս անխոնջ ու յամառ դարբին՝
Խփում է անվերջ իր մուրճը սալին
Ու սովետական ձեր բորբ քուրայից
Նետում է կայծեր ողջ տիեզերքին...

Ու պիտի ջնջէք դուք սեւ Փաշիզմի՛ն.
Դէ՛հ, այնպէ՛ս ջնջէք,
Որ ապագայի լուսաւոր չեմքին
Էլ երբե՛ք, երբե՛ք
Չլինի ոչ մի սարուկ ու ծառայ,
Չլինի արքա՛յ,
Ու լինի վճիտ ջուրի պէս զուլալ
Կեանքը դեռ գալիք մեր սերունդների...

Եւ լինի՛, լինի՛,
Հանուր մարդկութեան երազը պայծառ
Լինի սալարկուած ու լայն ծառուղի.
Եւ լինի՛, լինի՛,
Աշխարհի վրայ արեւ մի արդար,
Ու լինի մարդը մարդին հաւասար,
Եւ խաղաղութեան ճերմակ աղաւնուն
Չմերձի ոչ մի գիշատիչ թռչուն...

Լինի մարդկութեան երազը պայծառ,
Եւ ով յետ դառնայ լուսեղէն ճամբից,
Ինչպէս առասպել Ղովտի հէքեաթում՝
Դառնայ անշունչ քա՛ր...

Կը ջնջէք չուտով,
Ջնջել էք արդէն արդար բառնգքով
Որմում գալարուող ֆաշիստ հրէչին.
Կը մնայ չուտով այս արեւի տակ
Նրա չար թաթից
Ու սեւ ատուերից՝ լոկ սեւ յիշատակ:

Դաշնակ չներին.
Ջնջելը նրանց այնքա՞ն է հեշտին.—
Ոչ ռումբ է պիտոյ եւ ոչ էլ սուին,
Եւ ոչ էլ, ոչ էլ, օ՛ Գէորգ Սբով,
Հարկ է երկնքում չողացող աստղին
Տիղմ գցել ափով...

Բաւ է աշխարհում անվերջ թափառող
Հարազատներին
Հայրենի երկրում տալ մի պատառ հո՛ղ.
Թէկուզ եւ փոքրիկ, թէկուզ եւ խոպան,
Թէկուզ եւ լինի նա մութ դերեզման՝
Տալ մի պատառ հո՛ղ,
Որպէսզի օտար ու ցուրտ հողերում
Մեր մեռելների հոգին չմսխի,
Տալ մի պատառ հո՛ղ,
Որպէսզի դողդոջ մեր մանուկների
Վարդ շրթների վրայ,
Ինչպէս ձիւներում ընկած ծաղկի փերթ՝
Ջաւռի բարբա՛ռը մեր հնօրեայ...

Ջնջել հե՞տքն իսկ մեր.
Բայց ի՞նչ է արդէն
կեանքը մեզ համար,—

Զարչարանքի բե՛ռ,
Ու ճակատագրի քառուղիներում
Կեանքը մեզ համար՝
Անարիւն կռի՛ւ ու լռին մաչո՛ւմ.
Ծփել է արդէն մեր կարկամ ուսին
Բռունցքը բախտի.
Ու նորի՞ց բռունցք, ու նորի՞ց արիւն,
Եւ այն էլ, այն էլ երկրի՞ց Հայրենի...

Իսկ մենք, օ՛, դիտե՞ս, երջանիկ Աբով,
Թէ հիմա ցրուած աշխարհում անծէր,
Մէն մի հայ սրտի մէն մի տրոփով
Սպասում ենք դեռ՝
Հայրենի երկրի կանչին քաղցրալուր.
Սպասում ենք լուռ, տրտում ու խռով,
Ներկան՝ մեզ համար տառապանքի ծով,
Մեխուած մեր սրտին՝ անցեալը սուր սեպ,
Եւ ցուրտ ապագան, խաւար ու անյայտ,
Գողգոթաների կատարին ցցուած
Մեզ համար ցաւի մի նոր խաչափայտ:

Կորցրել ենք արդէն մեր հոգին պայծառ,
Երազները վառ,
Հայրենի հողի չունչը խնկաբոյր,
Մեր օջախների բարքերը մաքուր.
Եղել ենք ահա,
Անկուշտ գայլերին պատրաստի նոխազ.
Գալիս են նրանք, գայլերն այդ ծպտած,
Խօսում դրախտից, երկնքից անհաս,
Եւ քաղցրաշողոմ ժպիտով անուշ,
Բառերով քնքոյշ՝

Պոկում մեր մարմնից վերքեր անխնայ.
Խօսում են խաչից ու խաչի անուամբ
Մի հե՛ղ էլ խաչում մեզ խաչի վրայ...

Գալիս են ծածուկ կաբինէտներից
Մթին խաղերի ակէնտները դեռ,
Բերում յոյսերի բառեր մեղրալից
Ու ոսկուով ծախուող ոսկի երազներ.
Եւ վառն անյագ կիրքերի յագուրդ՝
Իրենց հեռաւոր սակարաններում
Հանում են աճուրդ...
Ու որպէս եղբա՛յր գալիս են ոմանք,
Եւ եղբայրութեան խօսքերով վսեմ,
Աչքերում ժպիտ, սրտներում հեգնանք՝
Զինում են եղբայրն ի՛ր իսկ եղբօր դէմ...


Ու դիտե՞ս, դիտե՞ս,
Աշխարհում ճգուող մեր ճամբաներին
Դարան են մտել դեռ քանի՛ աղուէս,
Եւ խոնջ ու վատուժ մեր մկաններին
Կպել են գաղտուկ
Արիւնածարաւ դեռ քանի՛ տզրուկ.
Ու դիտե՞ս, դիտե՞ս թէ կան մեր դիմաց
Անգարձ կորստեան վիհեր լայնաբաց,
Քանի՛ ուղիներ մթին ու խարդախ,
Եւ դամոկլէսեան դեռ քանի՛ սրեր
Մեր գլխին առկախ...

Օ՛ Գէորգ Աբով, հեռաւոր եղբայր,
Լսե՞լ ես արդեօք
Թէ ծովերից դէն, աշխարհում անծայր
Ունես բիւրաւոր եղբայրներ անոք,
Լսե՞լ ես նրանց պայքարի մասին

Ապրելու համար, մեռնելու համար...
Լսե՞լ ես նրանց բորբ սրտի մասին
Եւ նրանց սիրոյն՝ լեռայ հաւատար.
Լսե՞լ ես ապա նաեւ այն մասին՝
Թէ ամէն մի հայ, սիրով մի խնդուն,
Լինի նա Հնչակ, լինի Պոլշեւիկ
Եւ կամ Դաշնակ Շուն՝
Կը նետէ՛ր բոլոր օրերը գալիք
Բախտի նժարին,
Եթէ փոխարէն, նժարում միւս
Գէթ լինէր մի՛ օր, օ՛, մի՛ օր, մի՛ օր՝
Հայրենի երկրում մեր խորհրդային...



Ջնջել հետքն իսկ մեր, դաշնակ չներիս,
Նետել մեր աչքին վառօդ ու արճիճ,
Եւ ողջ աշխարհին ողջոյններ տալիս
Լոկ մե՛ր ականջին ատելութեան ճի՛չ...
Թէ կայ մեր բախտի մատեանում անտես
Որ էլի՛ մի հեղ մենք լինենք զոհուող,
Լինի՛ թող այդպէս.
Լինի մեզ համար անվախճան ղրկանք,
Եւ մահը նորից լինի մեզ նոր կեա՛նք,
Միայն թէ լինի՛, օ՛, լինի՛, լինի՛,
Մեր եղբայրների՛ համար, քոյրերի՛,
Մեր մանուկների եւ մեր որբերի,
Եւ որպէս չնորհ՝ մեր մեռելների
Շիրիմի՛ համար, օ՛, լինի՛, լինի՝
Պատառ մի չոր հող երկրում հայրենի...



Եկել եմ ահա — պօէտ մի չնչին,
Որպէս աչունից պոկուած մի տերեւ,
Եկել եմ ահա
Որպէս խոնջ կռունկ մի ժայռի վերեւ,
Եկել եմ ահա — պօէտ մի չնչին,
Եւ խառնած չունչս բիւրերի չնչին՝
Երգում եմ նրանց
Ծռուվքը խորին եւ վիշտը անանց.

Լսիր իմ երգում անսահման թախիծ,
Եւ պանդուխտի լաց,
Եւ սիրոյ արցունք լսիր իմ երգում,
Լսիր լեռնացած կարօտ իմ երգից
Եւ նահանջական պայքարի ղղջա՛մ...

Եւ լսի՛ր, լսի՛ր,
Ինձ հետ միասին լալիս է անյոյս
Մի ողջ ժողովուրդ,
Որի կէսն արդէն տարել է մի օր
Եղեռնը անգութ —
Յիշո՞ւմ ես, Դէր–Զօր...
Ու կէսը ցրիւ հողմերի բախտին,
Կանչում է ահա այս պորչ Հալէբից,
Բուրգերի երկրից, Բարիզից կանչում,
Ու դեռ հեռաւոր Կալիֆորնիայից
Եւ Մարմարայի ափերից տրտում,
Կանչում երկնքին, կանչում աստծուն,
Դժոխքի՛ն կանչում՝
Որ տանեն, տանեն, տանե՛ն դէպի տուն...


Եկել եմ ահա — պօէտ մի չնչին,
Եւ կարօտահար իմ եղբայրների
Տաք սի՛րտն եմ բերել իմ հայրենիքին,
Որպէսզի սրտից հայրենի երկրի
Բորբ մեր սրտի դէմ սառոյցը ճաքի,
Ու սառոյցի տակ, ինչպէս ճնճաղիկ
Բացուած արեւին,
Եւ ինչպէս քնքոյշ ու կարօտած մայր՝
Իր սիրտը բացի
Բոլորի՛ հանդէպ, բոլորի՛ համար...

Եկել եմ ահա — պօէտ մի չնչին,
Եւ որպէս ծովում խեղդուողի կանչ,
Ընկլուզուող նաւի եղերական սոյլ,
Աչնան մշուշում պլպլան ճաճանչ,
Եւ հողմերի դէմ առկայծող նշոյլ,
Եկել եմ ահա — պօէտ մի չնչին՝
Նետում եմ երկրիս իմ երգը վերջին.—
Տուել եմ ջրին, տուել եմ հովուն
Ինչ կեանքն էր դիզել իմ ջահել հոգում.
Ե՛ւ ուղեղիս մէջ օրերի դարսած
Գիտութիւնը բուռ,
Ե՛ւ սրտիս նստած յոյզը լայնաչերտ
Լոկ պատրանք եւ սուտ,
Նետել եմ հեռու՝ որպէս հոգու կե՛ղտ...


Իմ հոգին հիմա, մրրիկների դէմ
Ճարճատող քնար,
Որին փաթթել է անցեալը դժխեմ
Որպէս հնչուն լար՝
Մլիոն զոհերի աղիքները պիրկ.
Դարն է մղկտում լարերի վրայ
Ու ողբն իր նետում դարերին գալիք.—
Հասել է ահա բոպէն դերագոյն,
Կեանքի եւ մահուան արարը վերջին.
Զկա՛յ մեզ համար ուրիշ փրկութիւն
Քան մեռելների սեւաբախտ ուղին,
Որ ճգւում է տաք անապատներից,
Անցնում մեր սրտից
Եւ հասնում ի քե՛զ, եւ հասնում ի քե՛զ,
Իմ լուսապայծառ, կարմի՛ր հայրենիք...
Զունեմ ես հիմա եւ ոչ մի աստուած,
Ու ստապատիր ո՛չ մի ոսկի հորթ,
Ես, կեանքի հովտում յոգնաբեկ անցորդ

Եւ մխրաժների խաբուած ուղեկից...
Մաշել է սիրտս, մաշել է հոգիս
Աւօրեայի պաղ խարտոցների տակ.
Զկայ ինձ քաշող ե՛ւ ոչ մի մագնիս
Բացի քո աստղից վառ ու չողարձակ...

Իսկ դու հեռաւոր, երջանիկ ընկեր,
Օ՛ Գէորգ Աբով,
Հոգուդ մէջ դիզուած այդ մաղձը դեղին
Յանձնիր Զանգուի ցասկոտ ջրերին.
Խփի՛ր ականջիդ թմբուկը արթուն
Որպէս զգայուն
Ու յարաթրթիռ մի տիեզերաշօն
Հայրենի հողի տրոփուն կրծքին.
Լսիր դու հողին, լսիր դու հողին,
Դու հողի՛ն լսիր,
Եւ նա քեզ կ'ասի, թէ չկայ խոխր
Իր զաւակների միջեւ տարագիր,
Թէ չկա՛ն չներ,
Թէ հայ գեղջուկին սիրտն ի վեր ցցուած
Զկայ մաուզեր,
Այլ կան բիւրաւոր տառապող սրտեր՝
Նո՛յն հողի համար,
Եւ կան սրտերում վրէժի լեռներ՝
Նո՛յն եւ միեւնոյն ոսոխի համար,



Եւ հոգիներում սիրոյ ջրվէժներ
Միայն ձե՛զ համար,
Ո՛վ հայրենիքում ապրող եղբայրներ,
Միայն ձե՛զ համար...






Եւ միայն, միայն, միայն քե՛զ համար՝
Հէյ լա՛ն Երեւան,
Մշուշների մէջ կորսուած իմ եար՝
Հէյ լա՛ն Երեւան,
Ու խոյանքներիս դու վերջին կայան՝
Հէյ լա՛ն Երեւան,
Իմ առաջին սէր ու վերջին տենչանք՝
Հէյ լա՛ն Երեւան,
Մոքիս խանձարուր ու սրտիս պատանք՝
Հէյ լա՛ն Երեւան....

Հէյ Ջա՛ն Երեւան,
Գուցէ այս օտար երկրից աքսորի
Հոգիս Արաքսին երբեք չհասնի.
Ու այգաբացի չողերից առաջ
Ինձնից մնայ լոկ թեւաբեկ մի խաչ,
Ու երազներիս պալատը մարմար
Դառնայ մի դաչտում անտէր չիրմաքար.
Հէյ Ջա՛ն Երեւան,
Գուցէ հող դառնամ չհասած հողիդ,
Դառնամ յիշատակ ու դառնամ աճիւն.
Բայց մինչեւ կեանքիս նշոյլը յետին,
Ու վերջին շունչիս թրթիռը վերջին՝
Հոգիս քեզ համար կ'երգի օրհնութիւն,
Կ'երգի ծովացած հասկերն արտերիդ,
Աստղերի դագաղ Սեւանդ վճիտ,
Գործարաններիդ զանգուածը մեծդի
Ու բանուորներիդ քրտինքը կ'երգի,
Հէյ Ջա՛ն Երեւան...
Լինեմ մինչեւ հող ու դառնամ մոխիր՝
Կ'երգեմ բորենու սուր ատամներից
Մարմինդ պահող դրօշդ կարմիր...
Կ'երգեմ լուսաչող ու պայծառ ներկադ.
Եւ մեր անցեալի աւերակներից
Կ'երգեմ բարձրացող չքեղ ապագադ,
Հէյ Ջա՛ն Երեւան...

Հէյ Ջա՛ն Երեւան,
Լինեմ ես քնած թէ լինեմ արթուն,
Հէյ Ջա՛ն Երեւան,
Զարկերը արտիս տրոփ առ տրոփ,
Հէյ Ջա՛ն Երեւան,
Կ'երգեն քեզ համար միայն օրհնութիւն...
Միայն օրհնութի՛ւն, միայն օրհնութի՛ւն
Եւ սէ՛ր ու կարօտ,
Սէ՛ր եւ օրհնութիւն՝ Հէյ Ջա՛ն Երեւան.—

Հէյ ջա՛ն Երեւան,
Ա.րեւը պայծա՛ռ երկնքիդ վրայ,
Ա.րարատը քեզ լինի պահապան,
Ա.յգիներիդ մէջ որթը մեղրանայ,
Երդիքներիդ տակ ծիծաղն անպակաս,
Դէղերը հունձքիդ հսկայ լեռ դառնան
Ու յաւերժի դէմ յաւէտ չէն մնաս՝
Հէյ ջա՛ն Երեւան:

Հէյ ջա՛ն Երեւան,
Ձմեռների դէմ միշտ դալա՛ր մնաս
Ու պայքարներում մնաս յաղթակա՛ն,
Բռունցքդ չարին լինի պատուհաս,
Եւ զաւակներիդ համար հեռաւոր
Դու լայնաբաց պի՛րկ դառնաս մայրական
Եւ հեռուներից երգես մեզ օրօր՝
Հէյ ջա՛ն Երեւան...



Հէյ ջա՛ն Երեւան,
Օրերդ անցնին ծափով ու երգով,
Օրօրոցներիդ վերեւ ապագան
Լինի գարնային մեղմ ու անուշ հով.
Ջրահունքդ հողիդ օրհնութիւն դառնայ,
Հողդ ոսոխիդ դառնայ գերեզման,

Ու վիշտը սրտիդ ընդմիշտ բացակայ՝
Հէյ Յար'ն Երեւան...

Հէյ Յար'ն Երեւան,
Դրօշդ ձեռքիդ միշտ ամուր բռնես,
Մեծ երազը մեր անվթար պահես,
Գալիքն անցեալին զօդող կապ լինես,
Լոյսի ակերից անյագուրդ ըմպես,
Նայուածքիդ հուրով չարքերը վանես
Եւ հողմերի դէմ անխորտակ կանգնես՝
Հէյ Յար'ն Երեւան:

Հէյ Յար'ն Երեւան,
Հող բռնես ձեռքիդ ու դառնայ ոսկի՛,
Ծիլ տնկես արտիդ ու դառնայ կաղնի՛,
Շրթունքդ արեւի ակունքին հասնի,
Արմատդ հողի ընդերքից անցնի,
Աչքերիդ չողից լուսինը խամրի,
Հրճուանքդ մնայ, թախիծդ մեռնի՝
Հէյ Յար'ն Երեւան...

Հէյ Յար'ն Երեւան,
Դարերի դիմաց միշտ կանգուն կենաս,
Ու բախտի կոչին յար արթուն մնաս,
Լուսաւոր ճամբէդ անվարան գնաս,
Նախանձ աչքի դէմ ծակող փո՛ւշ դառնաս,
Սիրտդ աչխարհին որպէս վարդ բանաս,
Մէկով ցանք աներ, հազարով բառնաս՝
Հէյ Յար'ն Երեւան...

Հէյ ջա՛ն Երեւան,
Մի վայրկեանի մէջ օրով կանաչես,
Տիեզերքի դէմ վառքով ճաճանչես,
Մեր արցունքի մէջ հոգիդ ճանաչես,
Հոգուդ ժպիտով մեր վիշտը ջնջես,
Մի օր էլ դարձի չեփորը հնչես
Եւ պանդուխտներիդ հայրենիք կանչես՝
Հէյ ջա՛ն Երեւան...



Արտատպումները — նոյնիսկ եւ մանաւանդ մասնակի — արգիլուած են բոլոր երկիրներու համար բացի Խորհրդային Հայաստանէն, ուր ղրկուած է այս գրքին (Թուղթ առ Երեւան) ձեռագիրը հեղինակին կողմէ — 24 Դեկտեմբեր 1944 — ՀԱՑՊԵՏՀՐԱՏԻ հասցէին եւ հրատարակութեան առաջարկով։

• Copyright by Andranik Dzaroukian •

«ԹՈՂԹ ԱՌ ԵՐԵՒԱՆ»Ը

ՏՊՈՒԱԾ Է

1945-ին, Հալէպ։

1945-ին, Գահիրէ (Հէյ Զա՛ճ Երեւան)։

1946-ին, Հալէպ (Ց. Օշականի ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ հատորին հետ)։

1948-ին, Հալէպ, գրպանի ծաւալով։

1951-ին, Պէյրութ, (Էջվան հրատարակչականին կողմէ)։

1954-ին, Պոսթոն, հրատարակութիւն «Հայրենիքի

1954-ին, Պոսթոն, հրատարակութիւն «Հայրենիքի երկրորդ անգամ, հօրենրորդ տպագրութիւն։ (Պատկերազարդ)

1957-ին, Պէյրութ, (Էջվան հրատարակչականին կողմէ)։ (Պատկերազարդ)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ԷՏՎԱՆ» ԹԻՒ 29

Թիւ			Գին՝ Լ.Ո
1	Ց. Թումանեան	ԱՆՈՒՇ (Սպառած)	75
2	Ա. Ծառուկեան	ԹՈՒՂԹ ԱՌ ԵՐԵՒԱՆ (Սպառած)	200
3	Ա. Իսահակեան	ՍԱՍՄԱՑ ՄՀԵՐ	100
4	Պ. Դուրեան	(Սպառած)	125
5	Մ. Իշխան	ԵՐԵՔ ՄԵԾ ՀԱՑԵՐ	150
6	Դ. Վարուժան	ՀԱՐՃԸ	75
7	Ց. Շիրազ	ՇՈՒԱՆ եւ ԹԱՄԱՐԸ	75
8	Սայաթ-Նովա	ՏԱՂԵՐ (Սպառած)	150
9	Ա. Իսահակեան	ԱԲՈՒ ԼԱԼԱ ՄԱՀԱՐԻ	75
10	Ց. Թումանեան	ԱՆՈՒՇ (Բ. տպագրութիւն)	75
11	Վ. Տէրեան	ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ	100
12	Ե. Չարենց	ՀԱՏԸՆՏԻՐ	250
13	Մ. Մեծարենց	ԾԻԱԾԱՆ-ՆՈՐ ՏԱՂԵՐ	200
14	Վ. Թէքէեան	ՀԱՏԸՆՏԻՐ	150
15	Ինtra	ՆԵՐԱՇԽԱՐՀ	300
16	Սիամանթօ	ՀՈԳԵՎԱՐՔԻ ԵՒ ՑՈՑՍԻ ՋԱՀԵՐ — ԿԱՐՄԻՐ ԼՈՒՐԵՐ ԲԱՐԵԿԱՄԷՍ — ՀԱՅՐԵՆԻ ՀՐԱՒԷՐ — ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ	300
17	Ց. Շիրազ	ՍԻԱՄԱՆԹՕ եւ ԽԱՋԷԶԱՐԷ	100
18	Ա. Իսահակեան	ԻՄ ՑՈՒՇԵՐԻՑ	150
19	Վրթ. Փափազեան	ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ	200
20	Աւ. Իսահակեան	ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ (Ա. Հատոր)	300
21	Աւ. Իսահակեան	ԱՐՁԱԿ ԷՋԵՐ (Բ. Հատոր)	300
22	Ց. Պարոնեան	ՄԵԾԱՊԱՏԻՒ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐ	200
23	Վ. Շուշանեան	ԳԱՐՆԱՆԱՑԻՆ	350
24	Ա. Արփիարեան	ԿԱՐՄԻՐ ԺԱՄՈՒՑ	150
25	Պ. Դուրեան	ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ ԵՒ ՆԱՄԱԿՆԵՐ	200
26	Փ. Միքայէլեան	ԵՒԱ (Առձակուռդի բացիկներ)	100
27	Վ. Թոթովենց	ԿԵԱՆՔԸ ՀԻՆ ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ՁԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱՑ	350
28	Խրիմեան Հայրիկ	ՊԱՊԻԿ ԵՒ ԹՈՒՆԻԿ	200
29	Ա. Ծառուկեան	ԹՈՒՂԹ ԱՌ ԵՐԵՒԱՆ (պատկերազարդ)	250

Եդուարդ Պողպատեան
EDWAN PRESS
B. P. 3261 Tél. 36712
RUE NAHR- St MICHEL
BEYROUTH - LIBAN

PRINTED IN LEBANON

Գրք՝ 200 Լիբ. պահեկան



EDOUARD BOGHBADIAN
B. P. 3261
RUE NAHR- St MICHEL
BEYROUTH (LIBAN)